

**ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՈՒՎԱ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Բարբառային *նըվագ/նուվագ < նուագ, չըվան/չուվան < չուան, շըվե/շուվե/ շուվի < շուի*¹, *քըվեր/քուվեր < քուեր, տըվի/տըվե/տուվե < տուի*² «տվեցի» և նման ձևերի *ուվ* հնչյունակապակցություն ունեցող տարբերակների *ու-*ն սովորաբար դիտվում է որպես գաղտնավանկի *ը-*ի լիաձայնության արտահայտություն (*չըվան > չուվան* և այլն), քանի որ տվյալ դեպքում *ու-*ն նախնական լինել չի կարող: Այլապես վերջընթեր շեշտով բարբառներում *ու-*ն պետք է լիներ շեշտակիր³: Նկատենք, որ հետազոտողները, բերված բարբառային ձևերում *ու-*ն համարելով գաղտնավանկի *ը-*ից երկրորդաբար առաջացած, բուն *ըվ > ուվ* հնչյունափոխության (այն է՝ *վ-*ի առնմանական ազդեցությամբ *ը > ու* անցման) հարցը հատուկ քննության չեն ենթարկել, քանի որ *ըվ > ուվ* հնչյունական անցումը չի առանձնացվել տվյալ տարածքի բարբառներում գաղտնավանկի *ը-*ի լիաձայնության արտահայտության այլ դրսևորումներից:

Իսկ Մ. Աղաբեկյանը *ուվ* կապակցության *ու-*ի ծագման վերաբերյալ առաջ է քաշել միանգամայն այլ տեսակետ: Նա, նկատի ունենալով բարբառային մի շարք ձևերում *ըվ > ուվ* հնչյունափոխության բացակայությունը, այդպիսի հնչյունական անցում չի ընդունում նաև *չուվան, տուվե* և նման ձևերի դեպքում: Մ. Աղաբեկյանը մասնավորապես գրում է. «Եթե ընդունենք, որ այս օրինակներում *ու-*ն առաջացել է հետագայում, այսինքն՝ *ու > վ (տըվի)*, իսկ *վ-*ի ազդեցությամբ գաղտնավանկի *ը-*ն շրթնայնացել է (*տուվի*), ապա ինչո՞ւ այդպիսի հնչյունափոխության չենք հանդիպում նման մյուս դեպքերում, ինչպես՝ *հավ - հըվե՛րան* կամ *հւե՛րան*, բայց ոչ՝ *հուվե՛րան, սեվ - սըվ/ւըցնի՛լ, սւըցնի՛լ*, բայց ոչ *սուվըցնի՛լ, սօվ - սւը-ծա՛նալ*, բայց ոչ *սուվըծա՛նալ* և այլն: Բացի այդ, անգամ վերջընթեր շեշտով բարբառներում նշված զուգաբանությունների վերջին վանկի ձայնավորն է շեշտվում: Ուրեմն *ու-*ն ինքնուրույն ձայնավորի արժեք չի ունեցել, և *ուվ* կապակցությամբ արտացոլված է ձայնավորից առաջ նրա ձայնորդային արտասանությունը, եթե ոչ արդի փուլում, ապա գոնե մոտ անցյալում»⁴:

Նշենք, որ Մ. Աղաբեկյանը ձայնորդային արտասանություն ասելով նկատի ունի երկբարբառի ոչ վանկարար տարրը և տվյալ դեպքում

¹ Տե՛ս Ալ. Սարգսյան, Գորիսի բարբառը, Եր., 1975, էջ 72-73:

² Տե՛ս Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Եր., 1966, էջ 53, 187:

³ Տե՛ս Զ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 141:

⁴ Տե՛ս Մ. Աղաբեկյան, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն. - Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Եր., 2010, էջ 142:

հետևում է Է. Աղայանին: Այսպես, խոսելով Գորիսի խոսվածքում *վ/ու/ւ* հնչյունների ենթահնչույթային փոխհարաբերության մասին՝ նա ձայնորդային դիրք է համարում **C-VC** և **CV-C** (այսինքն՝ բառամիջում՝ **բաղաձայնի ու ձայնավորի** և **ձայնավորի ու բաղաձայնի** միջև) դիրքերը, որտեղ հանդես եկող **ւ**-ն, ըստ Մ. Աղաբեկյանի, նախորդող կամ հաջորդող ձայնավորի հետ կազմում է թույլ (կամ կեղծ) երկբարբառներ (հմմտ. **սըլցնի՛լ** և **սւէ՛րիլ**): Միևնույն ժամանակ նա զուգահեռ է անցկացնում Գորիսի խոսվածքի և հին հայերենի միջև՝ հղում տալով Է. Աղայանի «Գրաբարի քերականություն» աշխատությանը. «Չայտնի է, որ գրաբարում նույնպես համապատասխան գործառական ոլորտը բաշխվում է հիշյալ հնչյունների (այն է՝ *վ/ու/ւ* - Ս. Ա.) միջև»⁵:

Արդ, քանի որ Մ. Աղաբեկյանը ձայնորդային արտասանություն ասելով նկատի ունի երկբարբառի ոչ վանկարար տարրը և միևնույն ժամանակ գտնում է, որ բրբռ. **քուվէր**, **տուվի** և նմանատիպ ձևերում «**ու**-ն ինքնուրույն ձայնավորի արժեք չի ունեցել, այլ **ուվ** կապակցությամբ արտացոլված է ձայնավորից առաջ նրա ձայնորդային արտասանությունը», ապա դրանից հետևում է, որ Մ. Աղաբեկյանը, ըստ էության, ընդունում է Է. Աղայանի այն տեսակետը, որի համաձայն՝ հ. հայ. **ուա**, **ուի**, **ուե** և նման կապակցությունները երկբարբառներ են եղել: Բայց մյուս կողմից՝ Մ. Աղաբեկյանը հնարավոր է համարում, որ «ձայնավորից առաջ հին հայերենի **ու**-ն, որը, ի տարբերություն ձայնավորից հետո դիրքի, ինքնուրույն միավոր էր, այս բարբառներում ստեղծված հորանջի պատճառով թերևս ունեցել է երկբարբառային արտասանություն (**ոււ**), իսկ ձայնորդային **ւ** տարրը հետագայում վերածվել է շրթնատամնային **վ** բաղաձայնի»⁶:

Մեր կարծիքով, Մ. Աղաբեկյանի՝ վերը մեջբերված երկու մեկնաբանությունների միջև առկա է ներքին հակասություն: Եթե ընդունում ենք, որ **ու**-ն տվյալ դեպքում գտնվել է հորանջի դիրքում, այսինքն՝ ձայնավորից առաջ **ու**-ին վերագրում ենք վանկարար ինքնուրույն ձայնավորի հնչունական արժեք, այդ պարագայում այլևս չենք կարող ենթադրել, որ բրբռ. **ուվ** (հմմտ. **տուվի**, **քուվէր** և այլն) կապակցությամբ արտացոլված է ձայնավորից առաջ **ու**-ի ձայնորդային արտասանությունը: Եվ ընդհակառակը, եթե ընդունում ենք, որ **ու**-ն ձայնավորից առաջ ձայնորդային արտասանություն է ունեցել (այսինքն՝ եղել է ուժգնացող երկբարբառի ոչ վանկարար տարր), այդ դեպքում չի կարող խոսք լինել հորանջի մասին, քանի որ վերջինս ենթադրում է երկվանկ ձայնավորային հնչյունակապակցություն:

Ի դեպ, հայերենի համաժամանակյա և տարաժամանակյա փաստերը, տարբեր լեզուների ընձեռած տիպաբանական տվյալների լույսի ներքո, վկայում են այն մասին, որ հ. հայ. **ուա**, **ուի**, **ուե** և նմանատիպ հնչյունակապակցությունները երկու վանկարար ձայնավորից բաղկացած երկվանկ կապակցություններ են եղել, այսինքն՝ **ու**-ն գտնվել է հորանջի դիրքում⁷: Բայց միևնույն ժամանակ ակնհայտ է, որ բրբռ. **ուվա** կապակցության (հմմտ. **չուվան**, **տուվալ** և այլն) **ու**-ն չի կարող հ. հայ. **ուա**, **ուի**, **ուե** և այլ

⁵ Նույն տեղում, էջ 141:

⁶ Նույն տեղում, էջ 142:

⁷ Տե՛ս Ս. Ավետյան, *ՎԻՈՒ*-ի հնչյունական արժեքը և հնչույթային կարգավիճակը դասական հայերենում, Եր., 2012, էջ 147-164, 183-184:

կապակցությունների **ու**-ի անմիջական շարունակությունը լինել, քանի որ վերջընթեր շեշտով բարբառների տվյալները, ինչպես տեսանք, բացառում են այդպիսի ենթադրությունը:

Այդուհանդերձ, եթե մի պահ ընդունենք, որ տվյալ բարբառային ձևերում **ու**-ն եղել է հորանջի դիրքում, որը կանխելու նպատակով այն վերածվել է **ու** կապակցության, ապա վերջինս չէր կարող երկբարբառային արտասանություն ունենալ, եթե նկատի ունենանք, որ հայերենի պատմական զարգացման ընթացքում, այդ թվում՝ բարբառներում, ձայնավորից առաջ առհասարակ միահնչությային երկբարբառներ չեն առաջացել⁸: Այնինչ, լեզուներում ձայնավորից առաջ երկբարբառային արտասանությունը պահպանում են միայն միահնչությային երկբարբառները, իսկ երկհնչությայինները վերածվում են **ձայնավոր + բաղաձայն** կապակցության⁹: Յետևաբար, Մ. Աղաբեկյանի այն ենթադրությունը, որ **ու** երկբարբառի «ձայնորդային **ւ** տարրը հետագայում վերածվել է շրթնատամային **վ** բաղաձայնի», ինքնին բացառում է տվյալ դեպքում ենթադրյալ **ու** «երկբարբառի» գոյության հնարավորությունը. եթե ենթադրյալ **ու** «երկբարբառը» ձայնավորից առաջ տվել է **ուվ ձայնավոր + բաղաձայն** կապակցություն, այդ նշանակում է, որ **ու**-ը միահնչությային երկբարբառ չի եղել և, ըստ այդմ, առհասարակ երկբարբառ չի եղել (քանի որ ձայնավորից առաջ չի կարող երկհնչությային երկբարբառ լինել):

Արդ, եթե նույնիսկ ենթադրենք, որ տվյալ բարբառային տարածքներում հորանջը վերացնելու նպատակով **ու**-ն դարձել է **ու**, այդ պարագայում **ւ**-ը կարող էր առաջանալ միմիայն որպես միջանցումային **w** երկշրթնային բաղաձայն, որը, ի դեպ, լեզուներում **ս + մեկ այլ ձայնավոր** կապակցությունների դեպքում հորանջը վերացնելու հնարավոր եղանակներից մեկն է:

Սակայն բրբռ. **չուվան, քուվեր** և այլ ձևերի առաջացման հարցում հ. հայ. **ու** > բրբռ. **ըվ** > **ուվ** հնարավոր հնչյունական զարգացումը բացառելու և, մյուս կողմից, նախքան **ու** > **ու** փոփոխությունը բրբռ. **ուվ** կապակցության **ու**-ի համար հորանջի դիրք ենթադրելու դեպքում ստիպված կլինենք ընդունել, որ բրբռ. **ուվ** կապակցության **ու**-ն հ. հայ. **ու**-ի անմիջական շարունակությունն է, մի բան, որը, ինչպես տեսանք, հերքվում է վերջընթեր շեշտ ունեցող բարբառների տվյալներով:

Կարծում ենք՝ բրբռ. **ուվ** կապակցության տարածամանակյա քննության հարցում չպետք է անտեսել **ուվ**-ին զուգահեռ **ըվ** տարբերակի առկայությունը տվյալ բարբառային տարածքի տարբեր խոսվածքներում (հմմտ. վերը բերված **շըվե/չուվե, տըվե/տուվե, չըվան/չուվան** և այլ ձևերը): Բացի այդ, նկատի ունենանք, որ հ. հայ. **ու + մեկ այլ ձայնավոր** կապակցությունների փոխարեն տվյալ բարբառներում **ուվ + մեկ այլ ձայնավոր** կապակցությունների առկայությունը օրինաչափ բնույթ չի կրում, և, ընդհանուր առմամբ, **ըվ + մեկ այլ ձայնավոր** կապակցությունները գերակշռում են:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 51-69:

⁹ Տե՛ս Зиндер Л. Р. Общая фонетика. М., 1979, էջ 211-216, Поляков К. И. Персидская фонетика. М., 1988, էջ 47-51, V. A. Vassilyev, Englisch Phonetics. Moscow, 1970, էջ 195-196:

Այսպես, Գորիսի բարբառում հ. հայ. **տուեալ** անցյալ դերբայից ունենք **տըվալ/տռւվալ**, մինչդեռ նույն բայի անցյալ կատարյալի խոնարհված ձևերում և հարակատար դերբայում օրինաչափ կերպով հանդես է գալիս միայն **տըվ-** արմատական տարբերակը, ինչպես՝ **տըվի/տըվա, տըվիր/տըվար, տըվավ, տըվինք/տըվանք..., տըված** և այլն¹⁰ :

Ընդ որում, բարբառներում **ըվ-**ի համեմատությամբ **ուվ** տարբերակով ձևերի սակավաթվությունը չի կարող իբրև **ուվ-**ի նախնականության և, ըստ այդմ, վերապրուկային մնացորդների տեսքով պահպանված լինելու ապացույց դիտվել: Այն հանգամանքը, որ, ասենք, Ղարաբաղի բարբառում **հաւատալ** բառից նույնպես զուգահեռաբար ունենք **հըվա՛տալ** և **հուվա՛տալ**¹¹, այսինքն՝ **ըվ-**ով և **ուվ-**ով տարբերակներ, որտեղ **ա > ը** թուլացմամբ երկրորդաբար առաջացած **ը-**ի նախնականությունը **ու-**ի հանդեպ միանգամայն ակնհայտ է, մեր կարծիքով, անառարկելիորեն հաստատում է, որ բրբռ. **ուվ-**ը վերը բերված **չուվան, տուվալ** և այլ ձևերում նույնպես երկրորդաբար առաջացել է **ըվ-**ից՝ **վ-**ի ազդեցությամբ **ը > ու** շրթնայնացմամբ: Ի դեպ, **ա > ը** թուլացմամբ առաջացած **ըվ** կապակցությունը ևս բուլոր դեպքերում օրինաչափ կերպով չի դարձել **ուվ**. հմմտ. **հաւաքել > հըվա՛քել, հըվա՛քիլ** և դրափոխությամբ՝ **վըհա՛քել**¹², սակայն չունենք ***հուվա՛քել/իլ** և այլն:

Արդ, քանի որ **ըվ > ուվ** փոփոխությունը բարբառներում համընդհանուր օրինաչափություն չի եղել, այլ դրսևորվել է սահմանափակ կերպով, ապա բնավ էլ զարմանալի չէ, որ այն բացակայում է նաև բրբ. **հըվէ՛րան (< *հավէ՛րան)** և այլ ձևերի դեպքում: Հետևաբար կարծում ենք՝ ճիշտ չէր լինի, բրբռ. **հըվէ՛րան** տիպի ձևերից ելնելով (որոնք **ըվ > ուվ** հնչյունափոխության չեն ենթարկվել), կասկածի տակ դնել բրբռ. **ըվ > ուվ** հնչյունական զարգացումը:

Բացի այդ, Գորիսի բարբառում **զըզվանք/զուզվանք (<զզուանք)**¹³ ձևերի առկայությունը նույնպես կրկին հաստատում է **վ-**ի ազդեցությամբ **ը > ու** շրթնայնացման հնարավորությունը: Վերջին դեպքը կարևոր է նրանով, որ թեև **ը-**ն անմիջականորեն չի նախորդել **վ-**ին, այդուհանդերձ **ը-**ի և **վ-**ի միջև առկա **զ** բաղաձայնը չի խոչընդոտել **ը > ու** հնչյունափոխությանը: Այդ նշանակում է, որ ինչպես **զըզվանք > զուզվանք**, այնպես էլ **հըվատալ > հուվատալ**, այլև **նըվազ > նուվազ, չըվան > չուվան** և բարբառային մանաստիպ ձևերում տեղի է ունեցել սկզբունքորեն նույն հնչյունական անցումը. **վ-**ի առնմանությամբ **ը** ձայնավորը շրթնայնանալով դարձել է **ու**: Միայն թե, **ը-**ի դիրքից կախված, **հուվատալ, չուվան** և այլ ձևերում առաջացել է **ուվ** կապակցություն, մինչդեռ **զուզվանք** ձևում **ու-**ն և **վ-**ն ընդմիջարկված են **զ** բաղաձայնով, քանի որ այդպես են եղել նաև **ը-**ն և **վ-**ն նախքան **ը > ու** փոփոխությունը (**զըզվանք > զուզվանք**):

Եվ վերջապես, **չուվան, տուվալ, տուվէ** և նման ձևեր ունեցող բարբառային տարածքներում **լուանալ** և **լուացք** բառերի բարբառային արտացոլումները (**լուանալ > լըվանալ, լըվանալ, լըվան, լիվան, լուացք >**

¹⁰ Տե՛ս Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 219:

¹¹ Տե՛ս Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 411:

¹² Տե՛ս նույն տեղը:

¹³ Տե՛ս Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 72:

լըվացք, լըվասկ, լըվանսկ, լիվանսկ և այլն¹⁴) նույնպես, կարծում ենք, վկայում են այն մասին, որ հ. հայ. **ուա**-ն նշված բարբառներում նախ դարձել է **ըվա**, իսկ այնուհետև **ը**-ն կան հաջորդող **վ**-ի ազդեցությամբ շրթնայնացել է (**չուվան, տուվալ, շուվե/շուվի** և այլն), կան ձայնավորների ներդաշնակությամբ քմայնացման է ենթարկվել՝ **ը > ի** (**լիվան, լիվանսկ** և այլն), կան էլ շարունակել է պահպանվել **ըվ** կապակցությունը (**չըվան, լըվան, լըվանալ** և այլն):

Ի դեպ, բարբառային **ըվ > ուվ** անցումը տիպաբանական տեսանկյունից ևս միանգամայն հնարավոր է: Եթե նկատի ունենանք, որ լեզուներում **w/v**-ի ազդեցությամբ հարակից ոչ շրթնային լիահունչ ձայնավորները հաճախ վերածվում են շրթնային (**օ, ս** և այլն) ձայնավորների, ապա ինքնին հասկանալի է, որ թույլ **ə(ը)** ձայնավորը առավել ևս հեշտությամբ կարող էր **ə(ը) > ս(ու)** փոփոխության ենթարկվել¹⁵:

Մյուս կողմից, բարբառային տվյալները վկայում են, որ **ըվ** (< հ. հայ. **ու**)-ից առաջացած **ուվ** կապակցության **ու**-ն ինքնուրույն վանկարար ձայնավոր է եղել: Այն փաստը, որ Գորիսի բարբառի **չո՛ւվան** ձևում շեշտը երկրորդաբար տեղափոխվել է առաջին վանկի ձայնավորի վրա, ակնհայտորեն ցույց է տալիս, որ **ուվ** կապակցության **ու**-ն ինքնուրույն վանկարար ձայնավոր է եղել, այլապես ձայնորդային արտասանության պարագայում **ու**-ն չէր կարող շեշտ ստանալ: Ի դեպ, ավելի վաղ շրջանում ևս **ուվ** կապակցության համար ձայնորդային արտասանություն ենթադրելի չէ, քանի որ, ինչպես վերը տեսանք, թե՛ **ուվ**-ը և թե՛ **իւ**-ը (հմմտ. **չուվան, տուվալ** և **լիվան**) ակնհայտորեն առաջացել են **ըվ**-ից. մի դեպքում՝ **վ**-ի ազդեցությամբ **ը**-ի շրթնայնացման (**ըվ > ուվ**), մյուս դեպքում՝ ձայնավորների քմային ներդաշնակության (**ըվ > իվ**) հետևանքով:

Իսկ այն հանգամանքը, որ նույնիսկ վերջընթեր շեշտով բարբառներում սովորաբար **ուվ** հնչյունակապակցություն ունեցող բարբառային ձևերի վերջին վանկի ձայնավորն է շեշտվում՝ դրանով իսկ բացառելով **ու**-ի նախնականությունը, անշուշտ, ցույց է տալիս, որ բարբառային վերջընթեր շեշտի առաջացման ժամանակ **ուվ**-ը դեռևս ունեցել է **ըվ** տեսքը, և, բնականաբար, գաղտնավանկի **ը** ձայնավորը չէր կարող շեշտ ստանալ: Այսպիսով, պետք է ենթադրել, որ բարբառային վերջընթեր շեշտի առաջացումը ժամանակագրորեն հաջորդել է ձայնավորից առաջ **ս(ու) > v(վ)** փոփոխությանը (**չուան > չըվան** և այլն), բայց նախորդել է **əv(ըվ) > sv(ուվ)** փոփոխությանը (**չըվան > չուվան** և այլն):

Ուստի մեզ անհամոզիչ է թվում Մ. Աղաբեկյանի այն կարծիքը, ըստ որի՝ Սյունիք-Արցախ տարածքի բարբառային վերջընթեր շեշտը պատմականորեն կարող է կապված լինել հայերենի նախագրային շրջանի նույնատիպ շեշտի հետ:

Նա մասնավորապես գրում է. «Հայերենի վաղնջական շրջանում, ինչպես հայտնի է, շեշտահաջորդ ձայնավորի սղման հետևանքով վերջընթերային շեշտը դարձել է վերջնավանկային: Այս փոփոխությունը համարվում է համահայկական ընդհանուր հատկանիշ: Բայց կարելի է ենթադրել, որ

¹⁴ Տե՛ս **Կ. Դավթյան**, նշվ. աշխ., էջ 368, **Ալ. Մարգարյան**, նշվ. աշխ., էջ 72:

¹⁵ Տե՛ս **Ս. Ավետյան**, նշվ. աշխ., էջ 168-169:

հայերենի տարածքային մի տարբերակում, ասենք՝ Սյունիք-Արցախում, ինչ-որ ժամանակահատվածում գոյակցել են նոր առաջացած վերջնավանկային և ավանդական վերջընթերային շեշտերը: Վերջինս աստիճանաբար սկսել է գերիշխել և դառնալ շեշտադրության հիմնական օրենքը»¹⁶: Իհարկե, Մ. Աղաբեկյանը չի հերքում, որ նշված բարբառային տարածքում «բառարմատների ճնշող մեծամասնությունը նույնպես ենթարկվել է շեշտահաջորդ ձայնավորների անկման նախագրային հայերենի ընդհանուր օրենքին»¹⁷: Այդուհանդերձ, նրա կարծիքով, մի շարք բացառություններ, «որքան էլ քիչ, խոսում են խնդրո առարկա տարածքում վերջընթերային շեշտի վաղ ծագման, զուցե և հայերենի վաղնջական շրջանի նույնատիպ շեշտի շարունակվելու մասին»¹⁸:

Այսպիսով, Մ. Աղաբեկյանը փորձում է վերանայել հայերենագիտության մեջ ընդունված այն տեսակետը, որի համաձայն՝ բարբառային վերջընթեր շեշտը դիտվում է որպես հին հայերենի վերջնավանկային շեշտի հետագա փոփոխության արդյունք¹⁹:

Նշենք, որ դեռևս Է. Աղայանը արձանագրել է այն փաստը, որ Մեղրու բարբառում գաղտնավանկի **ը**-ն մեծ մասամբ վերածվել է որևէ լի ձայնավորի: Ընդ որում, «այդպիսի բառերից ոմանք առաջին, ոմանք էլ վերջին վանկում են շեշտ ունենում, առանց հայտնի պատճառի և կանոնի, ինչպես՝ **գզող > գուզող, գրույց > գրուց...**, **սղոց > սուղոց**, բայց **կկու > կոկու, կնգուղ > կոնգուղ, փշուր > փուշուր, կրծել > կոկրծիլ, քսակ > քրէսակ** և այլն»²⁰:

Մ. Աղաբեկյանը, նկատի ունենալով, որ վերը բերված մի շարք բառերում հին հայերենի գաղտնավանկի **ը**-ին համապատասխանող ձայնավորը շեշտակիր է, ենթադրում է, որ այդ բառերի «մի մասում, հավանաբար, այն (իմա՝ լի ձայնավորը - Ս.Ա.) նախնական է և ոչ թե ավելի ուշ շրջանում՝ հաջորդ ձայնավորի առնմանությամբ առաջացած հնչյուն...»²¹: Նա, մասնավորապես, հնաբանություններ է համարում բարբառային այն ձևերը, որոնց առաջին վանկի ձայնավորը, լինելով շեշտակիր, միևնույն ժամանակ համընկնում է հայերեն տվյալ բառի նախատիպի հնագույն ձայնավորի հետ, կամ կարող է իբրև վերջինիս հետագա բարբառային ձևափոխություն դիտվել (հմմտ. **կոնգուղ** < հուն. κουκούλλιον, **փուշուր** < կովկ. **փուշ/փաշ** արմատից, **կոկրծիլ** < հ.-ե. *gurǵ-, **քրէսակ** < պրթ. kīsak, **կոկրա~կրեայ** (< **կուր** «տաշտ») և այլն)²²:

Սակայն, մեր կարծիքով, վերը բերված և նմանատիպ այլ բարբառային ձևերի առաջին վանկի լի ձայնավորի նախնականությունը կասկած է հարուցում: Բանն այն է, որ բարբառներում հաճախ շեշտը երկրորդաբար տեղափոխվել է **ը**-ից առաջացած լի ձայնավորի վրա: Այսպես, Գորիսի բարբառում, մի կողմից, ունենք **բրինձ > պրրի՛նձ/պիրի՛նձ, գլուխ >**

¹⁶ Մ. Աղաբեկյան, նշվ. աշխ., էջ 93-94:

¹⁷ Նույն տեղում, էջ 89:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Տե՛ս Բ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 67-84:

²⁰ Տե՛ս Է. Աղայան, Մեղրու բարբառը, Եր., 1954, էջ 244:

²¹ Մ. Աղաբեկյան, նշվ. աշխ., էջ 81-82:

²² Տե՛ս նույն տեղը:

կիլօ՛խ (որտեղ շեշտը պահպանվել է իր նախկին դիրքում), մյուս կողմից՝ *բրուտ* > *պրրա՛տ/պի՛րա՛տ / պա՛րա՛տ, դմակ* > *տի՛ննկ, բլիթ* > *պր-լի՛թ/պի՛լիթ, կկու* > *կո՛կու, չուան* > *չրվա՛ն/չո՛վան* (որտեղ շեշտը երկրորդաբար տեղափոխվել է լի ձայնավորի վրա)²³:

Կարծում ենք՝ Մեղրու բարբառի վերը բերված ձևերի դեպքում ևս պետք է շեշտի հետագա տեղափոխություն ենթադրել, եթե հաշվի առնենք, որ, ասենք, Ղարաբաղի բարբառում այդ ձևերից մի քանիսը նույն ձայնավորումն ունեն, բայց Մեղրու բարբառի համապատասխան ձևերից տարբերվում են շեշտի դիրքով. հմմտ. *կո՛կու, փշուր, փա՛շա՛ր* (Մղր.)²⁴ և *կուկո՛ւ, փշա՛ր, փա՛շա՛ր, փըշո՛ւր, փուշո՛ւր* (Ղրբ.)²⁵: Մյուս կողմից, *սղոց* բառը, որը նախքան շեշտափոխական հնչյունափոխությունը գաղտնավանկի *ը*-ի փոխարեն ակնհայտորեն ունեցել է *ու* ձայնավոր՝ կազմված լինելով *սուղ* արմատից²⁶, Մեղրու բարբառի *սուղո՛ւց* ձևում շեշտ է կրում վերջին վանկում (և թերևս հենց այդ պատճառով էլ Մ. Աղաբեկյանը *սուղո՛ւց*-ի առաջին վանկի *ու*-ն նախնական չի համարում), մինչդեռ Ազուլիսի բարբառում, ընդհակառակը, շեշտն ընկնում է *սուղուց* ձևի առաջին վանկի *ու* ձայնավորի վրա՝ *սո՛ւղուց*²⁷: Արդ, շեշտի դիրքը և ձայնավորի երանգը նկատի ունենալով՝ կարելի էր մտածել, որ Ազուլիսի բարբառի *սո՛ւղուց* ձևը նույնպես հնաբանություն է, որի *ու*-ն *սուղ* արմատի նախնական *ու*-ն է ներկայացնում: Սակայն նկատենք, որ վերը բերված ենթադրյալ «հնաբանությունները» հետագա նորագոյացություններից սահմանազատելու միակ չափանիշը տվյալ պարագայում պատահական զուգահեռության սկզբունքն է. այն ձևերը, որոնցում ձայնավորի նախնական երանգն ու շեշտի դիրքը հանգամանքների բերումով համընկնում են, որակվում են որպես հնաբանություններ, իսկ եթե առաջին վանկի ձայնավորը չի շեշտվում, տվյալ ձայնավորի համապատասխանելը նախնական ձայնավորին դիտվում է իբրև հետագա նորագոյացություն: Բայց եթե հաշվի առնենք մի կողմից՝ գաղտնավանկի *ը*-ն լի ձայնավորով փոխարինելու, մյուս կողմից՝ շեշտի դիրքի հետագա փոփոխման հնարավորությունը, այդ պարագայում ենթադրյալ «հնաբանությունները» որպես այդպիսին, դառնում են խիստ կասկածելի:

Որ ձայնավորի նախնական երանգի և շեշտի դիրքի համընկնելը բավարար չէ տվյալ ձայնավորի նախնականությունն ապացուցելու համար, դրանում կարելի է համոզվել նաև վերը բերված *պա՛րա՛տ (< բրուտ)* ձևի միջոցով: Հայտնի է, որ վերջինս փոխառվել է խեթերենից, և խեթերեն ձևը ունեցել է *purut-* «կավ» տեսքը²⁸: Ուստի առաջին հայացքից կարող է թվալ, որ բրբռ. *պա՛րա՛տ* ձևի առաջին վանկի *ու*-ն նախնական է (< խեթ. *u-*ից), որը տվյալ դեպքում «Աճառյանի օրենքի» համաձայն քմայնացել է ձայնեղ *բ*-ից հետո (**բուրուտ* > **բա՛րա՛տ* > *պա՛րա՛տ*), և ըստ այդմ՝ *պա՛րա՛տ* ձևի վերջընթերային շեշտն էլ գալիս է հայերենի նախագրային շրջանից: Բայց

²³ Տե՛ս Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 26:

²⁴ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 244:

²⁵ Տե՛ս Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 397, 491:

²⁶ Տե՛ս Գ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, եր., 1979, էջ 233, 250:

²⁷ Տե՛ս Գ. Աճառեան, Քննութիւն Ազուլիսի բարբառի, Եր., 1935, էջ 55, 67, Գ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 233:

²⁸ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 313:

այդպիսի ենթադրության դեմ են խոսում մի կողմից՝ *պի՛րնու* ձևին զուգահեռ *պի՛րնու* և *պրրնու* ձևերի առկայությունը նույն Գորիսի բարբառում (տե՛ս վերը), մյուս կողմից՝ (*չուան >*) *չրվան/չո՛վան*, (*բլիթ >*) *պրլիթ/պի՛լիթ* ձևերը՝ վերջնավանկային և վերջընթերային շեշտերի հակադրությամբ, որոնց առաջին վանկի *ու* և *ի* ձայնավորները չեն կարող նախնական լինել, հետևաբար, ակնհայտորեն ցույց են տալիս, որ տվյալ դեպքում շեշտի հետագա տեղաշարժ է կատարվել: Ըստ այդմ՝ ակնհայտ է, որ բրբռ. *պի՛րնու* ձևի առաջին վանկի *նի*-ն ևս չի կարող նախնական լինել և որ *պի՛րնու* ձևը առաջացել է **բրուտ*-ից՝ ձայնավորների շրթնային ներդաշնակության և «Աճառյանի օրենքի» համաձայն քմայնացման շնորհիվ, մինչդեռ, օրինակ, *պի՛րնու* տարբերակում ձայնավորների շրթնային ներդաշնակությունը բացակայում է, և ունենք միայն *ը > ի* քմայնացում:

Բարբառային տվյալ տարածքի շեշտադրման ընդհանուր օրինաչափության (այն է՝ վերջընթերային շեշտի) հետևողությամբ՝ գաղտնավանկի *ը*-ից առաջացած այս կամ այն լի ձայնավորի երկրորդաբար շեշտ ստանալը ինքնին հասկանալի երևույթ է, որը, ինչպես տեսանք, անառարկելիորեն հաստատվում է բարբառային համապատասխան փաստերով: Ինչ վերաբերում է բարբառներում գաղտնավանկի *ը*-ից լի ձայնավորի առաջացման երևույթին, վերջինս պայմանավորված է եղել տարբեր գործոններով.

1) հաճախ գաղտնավանկի *ը*-ից լի ձայնավորն առաջացել է ձայնավորների ներդաշնակության օրենքի համաձայն. հմմտ. *խնծոր > խունծո՛ւր*, *գզող > գուզո՛ւղ*, *սողց > սուղո՛ւց* և, ըստ այդմ, նաև *կկու > կո՛ւկու*, *փշուր > փա՛շա՛ր* և այլն (Մղր.), *կկու > կուկո՛ւ*, *փշուր > փուշո՛ւր*, *փա՛շա՛ր* և այլն (Ղրբ.)²⁹,

2) գաղտնավանկի *ը*-ն «Աճառյանի օրենքի» համաձայն քմայնացման է ենթարկվել՝ *ը > ի* և այլն. հմմտ. *գրաւ > գիրնւ՛վ*, *գնալ > քիննւ՛լ*, *դմակ > տիմննկ* (Գրս.), *գրաւ > գիրնւ՛վ*, *գրուածք > գիրվասկ*, *դմակ > դիմննկ* և այլն (Մղր.), *գրուածք > կիրվանսկ*, *դմակ > տիմննկ*, *գնալ > քիննւ՛լ* և այլն (Ղրբ.)³⁰: Հաճախ միևնույն ձևում նկատելի է թե՛ քմայնացման, թե՛ ձայնավորների ներդաշնակության օրենքների ազդեցությունը (հմմտ. *պի՛րնու < բրուտ* ձևը),

3) բարբառներում հանդիպում են լիաձայնության արտահայտության նաև այնպիսի դեպքեր, որոնք չեն կարող բացատրվել ձայնավորների ներդաշնակության և քմայնացման հնչյունական օրենքներով: Մեր կարծիքով, բաղադրյալ ձևերում գաղտնավանկի *ը*-ն, որը տվյալ դեպքում առաջացել է շեշտափոխական հնչյունափոխությամբ, երբեմն լի ձայնավորով փոխարինվել է պարզ անհնչյունափոխ ձևերի համաբանությամբ: Այլ կերպ ասած՝ բաղադրյալ կազմությունների հնչյունական վերակազմավորում է տեղի ունեցել:

Այսպես, Ղարաբաղի բարբառում ունենք մի կողմից՝ *քուշտանալ*, *քըշտանալ* (< *կշտանալ*), *թըխակէլ*, *թուխակէլ*, *թուխպիլ* (< *թըբել* «ամպել»), *կըռտէլ*, *կօռտէլ* (< *կրտէլ*), *հընծէլ*, *հունծէլ*, *ունծէլ* (< *հնծէլ*) և այլն, մյուս կողմից՝ *կօշտ*, *կուշտ* (< *կուշտ* «հագեցած»), *թուխպ* (< *թուղբ*

²⁹ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 244, Կ. Ղավթյան, նշվ. աշխ., էջ 397, 491:

³⁰ Տե՛ս Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 75, 320-322, Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 266-267, Կ. Ղավթյան, նշվ. աշխ., էջ 336, 339, 342:

«ամա») *կօռտ* (< *կուրտ* «կրտելը»), *հուևծ, ուևծ* (< *հուևծք*) և այլն³¹: Մեզ թվում է, որ *քուշտանալ, թուխայէլ/թուխայիլ, կօռտէլ, հուևծէլ, ուևծէլ* և այլ ձևերի առաջին վանկի լի ձայնավորը վերականգնվել է *կուշտ, կօշտ, թուխայ, կօռտ, հուևծ, ուևծ* և այլ հարաբերակից անհնչյունափոխ ձևերի համաբանությամբ: Ըստ այդմ՝ շատ հնարավոր է, որ բրբռ. *կո՛ւրծիլ < կրծել* (Մղր.), *կօ՛րծիլ, կօ՛նծիլ < կրծել* (Ազլ.)³² ձևերի դեպքում ևս առաջին վանկի լի ձայնավորը վերականգնվել է նույն եղանակով, եթե հաշվի առնենք, որ հայերենում *կրծել/կրծուլ* «կրծել, ատամներով պոկել, հափշտակել, կորզել» բայի *կրծ-* բայարմատը ունեցել է նաև *կուրծ* արմատական տարբերակ (հմմտ. *կաշառակուրծ* «կաշառակեր, կաշառք վերցնող՝ ուտող»³³):

Յ. Աճառյանը Ազուլիսի բարբառը քննելիս *կօ՛րծիլ*-ը դիտում է որպես *ը > օ* փոփոխությամբ *կրծել*-ից առաջացած ձև, իսկ «Հայերեն արմատական բառարանում» գրում է. «Առանձին *կործ-* արմատածն է ներկայացնում Ազլ. *կօնծիլ...*»³⁴: Եթե նկատի ունենանք, որ հ.-ե. **gurg-* < **grug-* կամ թերևս հ.-ե. **gʰurg-*³⁵ նախածնից *n* ձայնավորով *կործ-* արմատածնի ծագումը անհավանական է, իսկ մյուս կողմից, Ազուլիսի բարբառում *ու-*ն շեշտի տակ դառնում է *օ* (հմմտ. *ուրախ > օ՛րախ, ուևիմ > օ՛նիմ, ուտիլ > օ՛տիլ* և այլն)³⁶, ապա ավելի ճիշտ կլինի ընդունել, որ Ազլ. *կօրծիլ*-ը առաջացել է *կրծել [կրծել]* ձևից՝ *ը (> ու) > օ* փոփոխությամբ:

Վերը ասվածից կարելի է հետևեցնել, որ բրբռ. *կո՛ւրծիլ* (Մղր.) և *կօ՛րծիլ/կօ՛նծիլ* (Ազլ.) ձևերում շեշտը երկրորդաբար տեղափոխվել է առաջին վանկի ձայնավորի վրա ճիշտ նույն կերպ, ինչպես Մեղրու բարբառի *փո՛ւշո՛ւր, կո՛ւկու*, Ազուլիսի բարբառի *սո՛ւղուց* և այլ ձևերում: Մինչդեռ Ղարաբաղի բարբառի *թուխայէ՛լ, հուևծէ՛լ, ուևծէ՛լ* և այլ ձևերում համաբանությամբ *ու* ձայնավորի վերականգնվելուց հետո շեշտը շարունակել է պահպանվել իր սկզբնական դիրքում դարձյալ նույն կերպ, ինչպես *կուկո՛ւ, փո՛ւշո՛ւր, փուշո՛ւր* (Ղրբ.) և այլ ձևերում: Այդպես էլ, ենթադրելի է, որ բրբռ. *կօ՛րա* (Ղրբ.) և *կօ՛րան* (Ազլ.) (< *կրեայ*) ձևերի *օ*(< *ու*) ձայնավորը վերականգնվել է *կուր* «տաշտ» բառի հետևողությամբ, եթե նկատի ունենանք, որ *կրեայ* ձևը, ըստ Յ. Աճառյանի, կազմվել է նույն *կուր* «տաշտ» արմատական ձևից՝ որպես «տաշտեայ, տաշտավոր»³⁷:

Մի շարք դեպքերում էլ, հավանաբար, բարբառային ձևերի լի ձայնավորը հետագայում վերականգնվել է նոր պարսկերեն (հնարավոր է նաև իրանականից փոխառյալ թուրքերեն) համապատասխան ձևերի նմանությամբ, կամ էլ տվյալ բարբառային ձևը պարզապես նոր շրջանի փոխառություն է, այլ ոչ թե հին հայերենի շրջանից ժառանգված: Այսպես, քանի որ իրանականից փոխառյալ հայ. *նշան* բառի նախատիպը առաջին վան-

³¹ Տե՛ս Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 397, 401, 358, 359, 68, 402, 413, 414:

³² Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 244, Յ. Աճառյան, Քննություն Ազուլիսի ..., էջ 55, 367:

³³ Յ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 666:

³⁴ Յ. Աճառյան, Քննություն Ազուլիսի ..., էջ 55, Յ. Աճառյան, Հայերեն արմատական..., հ. 2, էջ 266:

³⁵ Տե՛ս Յ. Աճառյան, Հայերեն արմատական..., հ. 2, էջ 666, Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 129:

³⁶ Տե՛ս Յ. Աճառյան, Քննություն Ազուլիսի..., էջ 76-77:

³⁷ Յ. Աճառյան, Հայերեն արմատական..., հ. 2, էջ 679:

կում ունեցել է *i* ձայնավոր (հմմտ. պրթ. nišān, ց. պրսկ. nišān), ապա առաջին հայացքից կարող է թվալ, թե Սեբաստիայի (**Նիշան**), Ջեյթունի (**Նիշուն**, **Նիշուն**), Սվեդիայի (**Նիշուն**) բարբառային ձևերում պահպանվել է նախնական *i* ձայնավորը: Այնինչ բերված ձևերը իրականում նոր փոխառություններ են թուրքերենից, իսկ թրք. nišan ձևն էլ իր հերթին փոխառվել է իրանականից³⁸: Ուստի շատ հնարավոր է, որ Ղարաբաղի բարբառի **Նըշա՛ն/Նիշա՛ն**³⁹ ձևերի **Նիշա՛ն** տարբերակը նույնպես նոր փոխառություն է թուրքերենից կամ պարսկերենից, կամ էլ օրինաչափ **Նըշա՛ն** ձևը, հնչյունապես ենթարկվելով պրսկ. (թրք.) nišan ձևի ազդեցությանը, դարձել է **Նիշա՛ն**: Այդպես էլ, կարելի է ենթադրել, որ բրբռ. **քիսակ** (Ջղ.), **քիսիկ** (Սկ., Վն.), **քա՛յսակ** (Ազլ.), **քրէ՛սակ** (Մղր.)⁴⁰ ձևերում նույնպես գաղտնավանկի **ը**-ն լի ձայնավորով փոխարինվել է ց. պրսկ. kīsa, թերևս նաև՝ իրանականից փոխառյալ թրք. kīse, kese ձևերի ազդեցությամբ: Մանավանդ որ հայ. **քսակ** (< իր. *kīsak) ձևին զուգահեռ հայերենում ունենք նաև բրբռ. **քիսա** ձև, որն ակնհայտորեն հետագա փոխառություն է ց. պրսկ. kīsa ձևից⁴¹:

Արդ, այդ ամենը նկատի ունենալով՝ կարծում ենք՝ ճիշտ չէր լինի բրբռ. **կո՛ւկու**, **փո՛ւշո՛ր**, **կո՛ւրծիլ**, **կո՛ւծիլ**, **քրէ՛սակ**, **քա՛յսակ** և նման ձևերի առաջին վանկի շեշտակիր լի ձայնավորը հնաբանություն համարել, իսկ բրբռ. **կուկո՛ւ**, **փուշո՛ւր**, **կօտտէ՛լ**, **նիշա՛ն** և այլ ձևերի առաջին վանկի շեշտագուրկ լի ձայնավորը՝ հետագա նորագոյացություն, քանի որ այդ կնշանակեր առաջնորդվել պատահական զուգադիպության սկզբունքով: Պետք է ընդունել, որ թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում առաջին վանկի լի ձայնավորը առաջացել է գաղտնավանկի **ը**-ից երկրորդաբար, որից հետո շեշտը կա՛մ շարունակել է պահպանվել է իր սկզբնական դիրքում, կա՛մ էլ տվյալ բարբառներին բնորոշ շեշտադրման ընդհանուր օրինաչափության համաձայն տեղափոխվել է վերջընթեր վանկի (այսինքն՝ առաջին վանկի) ձայնավորի վրա:

Այսպիսով, վերը կատարված քննությունը մեզ բերում է այն եզրակացության, որ հին հայերենի **ուա**, **ուե**, **ուի** երկվանկ ձայնավորային կապակցությունների **ու**-ն հորանջի դիրքում նախ համընդհանուր կերպով դարձել է **ըվ**, իսկ այնուհետև **ը**-ն նշված բարբառներում կա՛մ հաջորդող **վ**-ի ազդեցությամբ շրթնայնացել է (**չուվան**, **տուվալ**, **շուվէ/շուվի** և այլն), կա՛մ ձայնավորների ներդաշնակությամբ քմայնացման է ենթարկվել՝ **ը > ի** (**լիվա՛լ**, **լիվա՛սկ** և այլն), կա՛մ էլ շարունակել է պահպանվել **ըվ** կապակցությունը (**չըվան**, **լըվա՛լ**, **լըվանալ** և այլն): Ընդ որում, թեև **ըվ > ուվ** հնչյունափոխությանը նպաստել է տվյալ բարբառներում գաղտնավանկի **ը**-ն որևէ լի ձայնավորով փոխարինելու ընդհանուր միտումը, այդուհանդերձ բուն **ը > ու** հնչյունական անցումը պայմանավորված է եղել շրթնատամային **վ**-ի առնմանական ազդեցությամբ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ **ըվ > ուվ** հնչյունափոխությունը բարբառներում սահմանափակ բնույթ է կրել. հնարավոր է, որ **ըվ > ուվ** հնչյունափոխական միտումի օրի-

³⁸ Տե՛ս **Յ. Աճառյան**, Հայերեն արմատական..., հ. 3, Եր., 1977, էջ 460:

³⁹ Տե՛ս **Կ. Դավթյան**, նշվ. աշխ., էջ 439:

⁴⁰ Տե՛ս **Յ. Աճառյան**, Հայերեն արմատական..., հ. 4, էջ 598, **նույնի՛** Քննութիւն Ա-գուլիսի..., էջ 55, 398, **Է. Աղայան**, նշվ. աշխ., էջ 244:

⁴¹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 549:

նաչափ դրսևորմանը խոչընդոտել են զանազան միջբարբառային ու միջխոսվածքային փոխազդեցությունները, որոնք, ի դեպ, հաճախ ենթադրելի են նաև այլ բարբառային ոչ խիստ օրինաչափ հնչյունափոխությունների պարագայում: Հետևաբար, Ս. Աղաբեկյանի վկայակոչած բարբառային անհնչյունափոխ ձևերը բնավ էլ կասկածի տակ չեն դնում **րվ > ուվ** հնչյունական անցումը: Իսկ այն հանգամանքը, որ նույնիսկ վերջընթեր շեշտով բարբառներում սովորաբար **ուվ** հնչյունակապակցություն ունեցող բարբառային ձևերի վերջին վանկի ձայնավորն է շեշտվում՝ դրանով իսկ բացառելով **ու**-ի նախնականությունը, անշուշտ, ցույց է տալիս, որ բարբառային վերջընթեր շեշտի առաջացումը ժամանակագրորեն հաջորդել է ձայնավորից առաջ **ս(ու) > ս(վ)** փոփոխությանը (**չուան > չրվան** և այլն), բայց նախորդել է **ս(րվ) > սս(ուվ)** փոփոխությանը (**չրվան > չուվան** և այլն): Ինչ վերաբերում է այն թվացյալ «հնաբանություններին», որոնք առաջին հայացքից կարծես թե վկայում են բարբառային վերջընթեր շեշտի ավելի վաղ ծագման, մասնավորապես, հայերենի նախագրային շրջանի նույնատիպ շեշտի շարունակականության մասին, իրականում բարբառային հետագա նորագոյացություններ են:

Բանալի բառեր – միահնչույթային երկբարբառ, երկհնչույթային երկբարբառ, հորանջի դիրք, երկվանկ ձայնավորային հնչյունակապակցություն, վերջընթեր շեշտ, բարբառային նորագոյացություն, հայերենի նախագրային շրջան

САРГИС АВЕТЯН – О происхождении армянского диалектного звукосочетания ուվաւ. – Считается, что гласный **ու** в диалектных формах **չուվան, տուվաւ** и т. д. возник из гласного **ր** (**չուվան < չրվան** и др.). Однако те, кто придерживается этого мнения, по сути не рассматривали переход **րվ > ուվ** (то есть ассимилятивное изменение **ր > ու**, вызванное лабиодентальным **վ**) в диалектах. Традиционная точка зрения оспаривается рядом исследователей, которые основываются на диалектных формах, не претерпевших данного изменения (например, **հաւ – հրվէրան, սէվ – սրվ/ւրցնիլ** и др.). Они предполагают, что звукосочетание **ուվ** отражает соответствующий глайд бывших дифтонгов. Однако в пользу традиционной точки зрения говорят неоспоримые факты. При этом надо иметь в виду, что изменение **րվ > ուվ** носило ограниченный и нерегулярный характер, чем и обусловлено его отсутствие в диалектных формах **հաւ – հրվէրան, սէվ – սրվ/ւրցնիլ** и др.

Ключевые слова: ассимилятивное изменение, глайд бывших дифтонгов, фонетический переход, диалектное звукосочетание, диалектные формы, монофонематический дифтонг, бифонематический дифтонг

SARGIS AVETYAN – On the Problem of the Origin of the Armenian Dialectal Sound Sequence ուվաւ. – The present article deals with the origin of the vowel **ու** in dialectal forms like **չուվան, տուվաւ**. It is usually assumed that the vowel **ու** goes back to the vowel **ր** (e.g. **չուվան < չրվան**). Unfortunately, the supporters of this opinion have not specially considered the change **րվ > ուվ** (that is, the assimilative change **ր > ու**, caused by labiodental **վ**) in dialects. The above mentioned traditional view is chal-

lenged by some researchers on the basis of certain dialectal forms which have not undergone the change $\rho\upsilon > n\iota\upsilon$ (e.g. *hωϑ - hρϑk ρωϑ*, *υkϑ - υρϑ/ιρgϑhι*), and it is believed that the sound sequence *nιϑ* is not anything else but reflection of the corresponding glide of earlier diphthongs. However, the latter assumption is not borne out by dialectal evidence, whereas a number of indisputable facts are in favour of the phonetic development $\rho\upsilon > n\iota\upsilon$. A special note should be taken of the restricted and irregular nature of the change $\rho\upsilon > n\iota\upsilon$, which accounts for also the unchanged forms *hωϑ - hρϑk ρωϑ*, *υkϑ - υρϑ/ιρgϑhι* and the like.

Key words – *dialectal sound sequence, dialectal forms, assimilative change, glide of earlier diphthongs, monophonemic diphthong, biphonemic diphthong*